

ԽԱՁԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԺԵՄԱՐԱՆԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

«Մանուկ Աբեղյանը դասական հայագիտության ամենակարկառուն դեմքերից մեկն է, նրա հաստաբեատ, դիմակալում ու անհողդողդ կաղնին, որի արմատները ձգվում են դեպի հայ մշակույթի հազարամյա պատմության խորքերը, դեպի Մեսրոպ Մաշտոցն ու Մովսես Խորենացին»:

(Ա. Տ. Ղանալանյան)

Մանուկ Խաչատուրի Աբեղյանը ծնվել է 1865 թ. մարտի 5-ին (մ. տ. 17-ին) Նախիջևանի Հին Աստապատ գյուղում, հողագործի ընտանիքում: Այս գյուղը Ավարայրի դաշտից շատ հեռու չէ. «Պատմել են, որ Ավարայրի դաշտից Վարդան Մամիկոնյանի մարմինն այստեղ են բերել ու պատել, որից էլ՝ տեղանունը՝ Աստապատ»¹: Հայրն իր կրտսեր որդուն ուսման է տալիս գյուղից ոչ հեռու գտնվող Կարմիր վանքի դպրոցում: Մանուկն այստեղ երկար չի սովորում՝ ընդամենը վեց ամիս, և երջանիկ պատահականությամբ 11 տարեկան պատանին 1876-ին ընդունվում է Սուրբ Էջմիածնի Գևորգյան Ծեմարանի դպրանոցական հանրակրթական բաժին, որն ավարտում է բարձր գնահատականներով, իսկ 1882-ին անցնում է լսարանական բաժին: 1885 թ. առաջնակարգ մրցանակագրով Աբեղյանն ավարտում է Ծեմարանը և նույն տարում էլ նշանակվում Ծեմարանի գրադարանապետ և դպրանոցական բաժնի դասատու՝ դառնալով իր ճեմարանական ուսուցիչներ Սեդրակ Մանդիկյանի, Ստեփանոս Պալասանյանի, Կարապետ Կոստանյանի և Փիլիպոս Վարդանյանի գործընկերը:

Դեռևս Ծեմարանում սովորելու տարիներին պատանի Մանուկի մեջ մեծ սեր կար հայ բառ ու բանի, ժողովրդական երգի ու վիպասանության հանդեպ: Այդ սերը նրա մեջ առաջացել էր մանուկ հասակից. հայրենի գյուղում նա սիրում էր նստել մեծերի կողքին ու լսել նրանց պատմած առասպելաբանական ու ժողովրդական գրույցները, ավանդավեպերը, նրանց առածներն ու ասացվածքները, սովորել

¹ Տե՛ս Սարգիս Հարությունյան, Մ. Աբեղյանի կյանքը և գործը: Ե, 1970:

Արանց երգած երգերը, որոնք անչափ գերել են ապագա բանագետ-բանասերին, և որոնց ուսումնասիրությունն ու գրառումն էլ դարձել է Արա կյանքի նպատակներից մեկը: Ահա թե ինչու է Արան այնքան հրապուրել Շեմարանի պահակ մոկացի Նախո քեռու՝ «Սասունցի Դավթի» մի պատումը, որը նա սիրով գրի է առել, և որը դարձել է մեր ժողովրդական մեծ էպոսի աբեղյանական հավաքման ու մշակման հիմքը:

Շեմարանական տարիներին Աբեղյանը գրում էր նաև բանաստեղծություններ, որոնք տպագրվում էին «Աղբյուր» մանկական ամսագրում և «Արարատ»-ում: 1888-ին Օուշիում լույս տեսած Արա բանաստեղծությունների ժողովածուն վկայում էր, որ «դրանց նյութը ժողովրդի ավանդություններն ու զրույցներն էին, հնամենի հավատալիքներն ու դիցաբանական կերպարները»², որոնք ոչ այնքան բանաստեղծական, որքան վիպական ստեղծագործության նյութ էին:

1887 թ. Աբեղյանը հրավիրվում է Օուշի՝ թեմական դպրոցում հայոց լեզու և գրականություն դասավանդելու: Այստեղ նա բանաստեղծություններին զուգահեռ շարունակում է իր բանահյուսական հետազոտությունները և 1889-ին Օուշիում հրատարակում «Դավիթ և Մհեր» ժողովրդական վեպի երկրորդ պատումը, որը բարձր է գնահատվում Լեոյի և Ն. Մատի կողմից:

Օուշիում երկու տարի աշխատելուց հետո, 1889-ի աշնանը, իր ճեմարանական ուսուցիչ Փիլիպոս Վարդանյանի կողմից Աբեղյանը հրավիրվում է Թիֆլիս՝ Հովհաննյան օրիորդաց վարժարանում հայոց լեզու և գրականություն դասավանդելու: Այստեղ ստեղծագործելու ավելի լայն առարկեզ է բացվում խոստումնալից երիտասարդի համար, և նա տեղական մամուլում, հատկապես «Նոր-Դար»-ում պարբերաբար բազմաթիվ հոդվածներ, գրախոսություններ է հրատարակում գիտության, կրթության, արվեստի և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Որոշ ժամանակ էլ ինքն է խմբագրում թերթը:

Առանձնապես հիշատակելի են Մ. Աբեղյանի հրապարակախոսական այն հոդվածները, որոնցում մեծ տեղ է տրվում հայ ժողովրդի պատմության մեջ Եկեղեցու ունեցած մեծ դերին³, մայրենի լեզվի, գրականության, պատմության և արվեստի պահպանության ու զարգացման կարևոր հարցերին⁴: Աբեղյանը ժողովրդի հոգևոր կյանքում շատ բարձր է գնահատում արվեստի դերը՝ կարևորելով հատկապես թատրոնի ներգործումն ուժը: Նա թատերական բեմը համարում էր մի դպրոց, մի վարժարան, ուր օգտավետ ու զվարճալի եղանակով ժողովուրդը քնքշանում, սիրտն ազնվանում է... կամ ասելի է դարձնում տգեղն ու մոլեկանը»:

Թիֆլիսը, սակայն՝ Թիֆլիս, արվեստը՝ արվեստ... Աբեղյանը ձգտում էր եվրոպական բարձրագույն կրթության: Ձգտումը քիչ է. նա երագում էր, բայց ի՞նչ միջոցներով... Ահա այս հարցում էլ ինչպես հայազգի շատ մտավորականների, այնպես

² Նույն տեղում, էջ 20:

³ Տե՛ս «Նոր-Դար», 1891, № 98-99:

⁴ Նույն տեղում, № 128 և 138:

էլ ուսումնաստեմէ Մանուկ Արեւելանին օգնում է մեծ բարերար, ազգասեր ու արվեստասեր Ալեքսանդր Մանթաշյանը:

1893-ին Մ. Արեւելանը Գերմանիայում է. մա ընդունվում է Եմայի համալսարանի բանասիրության և փիլիսոփայության ֆակուլտետ, ապա տեղափոխվում Լայպցիգի և Բեռլինի համալսարաններ, իսկ 1896-1897 թվականներին Մ. Արեւելանը, որպես ազատ ունկնդիր, դասախոսություններ էր լսում Սորբոնի համալսարանում: Քանի որ Եվրոպայում ուսանելու տարիներին մա ազատ կերպով տիրապետում էր գերմաներենին ու ֆրանսերենին, ուստի այդ ընթացքում ուսումնասիրում է այդ ժողովուրդների բանահյուսությունը, գրականությունը ու պատմությունը և խորապես տիրապետում է փիլիսոփայությանը:

Եվրոպայից մա շարունակում է թղթակցել «Նոր-Ռար»-ին ու «Արարատ»-ին:

Երբ 1893-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը հովվապետական ուղևորություն է կատարում Ավստրիա, լինում է մաև Միսիթարյան միաբանների մոտ: Մ. Արեւելանը շտապում է Վիեննա, մեկնաբանում Վեհափառի ուղևորության մպատակը, «որպեսզի Եվրոպայի հայ գաղթօջախներում եվրոպական ժողովուրդների մեջ բարձրացնի հայ ազգի հեղինակությունը...»⁵:

1897-ին Սորբոնից «Արարատ» ամսագրին է ուղարկում «Մեր երկու գրական լեզվի միասնության խնդիրը» ծրագրային հոդվածը, որտեղ մեր գրական լեզվի երկու տարբերակների մերձեցման հիմնական միջոցը մա համարում է այդ լեզվաձևերի փոխադարձ համաձայնեցումը⁶:

1898-ին ավարտական քննություններ հանձնելով՝ Արեւելանն ավարտում է Եմայի համալսարանը, և «Հայ ժողովրդի հավատքը» գերմաներեն գրած դիսերտացիոն աշխատանքի համար ստանալով փիլիսոփայության դոկտորի դիպլոմ, վերադառնում Թիֆլիս՝ Հովհաննյան վարժարանում աշխատանքը շարունակելու: Հաջորդ տարի Արեւելանի դիպլոմային աշխատանքը տպագրվում է Լայպցիգում և արժանանում բարձր գնահատականի:

Նոր էր Արեւելանը վերադարձել Թիֆլիս, երբ ստանում է Գևորգյան Ընմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանի հրավերը՝ Ընմարան վերադառնալու խնդրանքով:

1898-ին Արեւելանը վերադառնում է Ընմարան և 16 տարի անընդմեջ, մինչև 1914 թվականը, աշխատում այստեղ՝ դասավանդելով հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն, աշխարհագրություն և գերմաներեն:

1903 թ. Արեւելանն ամուսնանում է գորավար Գևորգ Ծախաթունյանի դստեր հետ և ունենում չորս արու զավակ, որոնցից մեկը ժողովրդական մկարիչ Մհեր Արեւելանն է, մեկն էլ զոհվել է Մեծ հայրենականում:

Ընմարանում աշխատելու տարիներին Խրիմյան Հայրիկը Արեւելանին առաջարկում է ստանձնել Ընմարանի տեսչի պաշտոնը: Արեւելանը կանոնադրական մոր

⁵ Տե՛ս «Նոր-Ռար», 1893-ի օգոստոսի 18-ից սեպտեմբերի 11-ի համարները:

⁶ Տե՛ս «Արարատ», 1897, № 9-10 և 11-12:

առաջարկներ է ներկայացնում ժեմարանի, նրա սաների ու դասախոսների վիճակը բարելավելու համար. աշխարհիկ կյանքի որոշ արտոնություններ է նախատեսում աշակերտների համար, նոր առարկաներ ավելացնում ուսումնական ծրագրում, որոնք Կաթողիկոսին այնքան էլ դուր չեն գալիս, և Աբեղյանը հրաժարվում է տեսչի պաշտոնից: Տեսուչ է նշանակվում Միմաս Բերբերյանը:

Խորիմյան Հայրիկի մահից հետո ավելի է վատթարանում ժեմարանի ու նրա դասախոսների դրությունը: Ժեմարանի առաջադեմ ուսանողներն ու դասախոսները դառնում են ցարական ոստիկանության թիրախ՝ անընդհատ ենթարկվելով հալածանքների ու բռնությունների: Ձերբակալվում է Միմաս Բերբերյանը, և ժեմարանի մանկավարժական խորհրդի նախագահի ու տեսչի պարտականությունները դրվում են Մանուկ Աբեղյանի վրա, որը երկար չի աշխատում: Այնուհետև կարճ ժամանակով տեսչի պաշտոնակատար է նշանակվում Ստեփան Կանայանը:

Մ. Աբեղյանը շարունակում է ժեմարանում աշխատել մինչև 1914 թվականը, երբ ուսուցչական կոլեկտիվի երկպառակության պատճառով Գևորգ Ե Կաթողիկոսը ստիպված է լինում ազատ արձակել ժեմարանի բոլոր դասախոսներին: Հենց այդ ժամանակ էլ, 1914 թվականի աշնանը, Ներսիսյան դպրոցի վարչության հրավերով Աբեղյանը տեղափոխվում է Թիֆլիս և աշխատանքի անցնում Ներսիսյան դպրոցում՝ դասավանդելով նաև Հովնաթյան օրիորդաց վարժարանում և Կովկասյան համալսարանում: Նա միաժամանակ ընդգրկվում է Թիֆլիսում հիմնադրված հայ գրողների կովկասյան ընկերության մեջ և գործում մասնակցություն ցուցաբերում դրանում կազմակերպվող միջոցառումների՝ կարդալով բազմաթիվ զեկուցումներ հայ հին ու միջնադարյան գրականության մասին և հրապարակելով բազմաթիվ ու բազմաբնույթ հոդվածներ, գրախոսականներ ու աշխատություններ: Նա զեկուցումներ կարդալու է հրավիրվում նաև Բաքու, Ալեքսանդրապոլ և այլուր:

1915-17 թվականներին Աբեղյանը կրկին ու երիցս հրավիրվել է Գևորգյան ժեմարան, բայց նա հրաժարվել է (վիրավորված էր Կաթողիկոսից): Նա նույնիսկ մերժում է իր մտերիմ բարեկամներ Գարեգին Լևոնյանին, Ստեփանոս Մալխասյանցին, որը նոր տեսուչն էր:

1918 թ. Թիֆլիսում Հ. Թումանյանի, Գ. Լևոնյանի և շատ մտավորականների ջանքերով սկիզբ է դրվում Երևանում համալսարան բացելու աշխատանքներին: Այդ աշխատանքների կազմկոմիտեի անդամ էր նաև Մանուկ Աբեղյանը, որը հենց հաջորդ տարի, 1919-ին, հիմնավորապես տեղափոխվում է Երևան և զբաղվում նորաբաց համալսարանի գործերով և օգոստոսի 1-ից նշանակվում համալսարանի դասախոս: Ծննդալիմ հարմարություններ չլիներ ու պատճառով համալսարանի պաշտոնական բացումը կատարվում է Գյումրիում, 1920 թ. հունվարի 21-ին (առաջին ռեկտորն էր Յու. Ղամբարյանը): Նույն թվականի հունիսին համալսարանը տեղափոխվում է Երևան ու տեղավորվում ուսուցչական սեմինարիայի շենքում: Համալսարանի առաջին ֆակուլտետներից էր պատմաբանասիրականը, որի առաջին դեկան է նշանակվում Մանուկ Աբեղյանը:

Մանկավարժական աշխատանքներին զուգահեռ Արեղյանը կատարում է մաս պետական-հասարակական կարևոր հանձնարարություններ: 1921 թ. Խորհրդային Հայաստանի Լուսժողկոմի հանձնարարությամբ Արեղյանը պատրաստում է ուղղագրական ռեֆորմի մախագիծը:

Մ. Արեղյանը դեռևս 1890-ին «Նոր-Դար» թերթի տասը համարներում⁷ պարբերաբար հրատարակել է «Ուղղագրական մկատողություններ» հոդվածաշարը*, որտեղ գիտականորեն հիմնավորում էր, որ ուղղագրության առաջին և գլխավոր սկզբունքը հնչյունականն է, այսինքն՝ բառերի գրությունը պետք է համապատասխանի արտասանությանը (ինչպես վարվել էր մեր առաջին ուսուցիչը՝ Մեսրոպ Մաշտոցը):

Երկրորդ անգամ Արեղյանն այս հարցին անդրադառնում է 1892-ին՝ «Հայոց լեզվի ուղղագրությունը»⁸ ուսումնական ձեռնարկով, իսկ 1913-ին մա երրորդ անգամ է հիմնավորում ուղղագրության բարեփոխման անհրաժեշտությունը: Հոկտեմբերի 14-ին Էջմիածնում կայացած հայ գրերի գյուտի 1500 և հայ տպագրության 400-ամյակին մկիրված համազգային հոբելյանական մեծ համդեսում կարդացած իր զեկուցման մեջ զարգացնում է դեռևս 23 տարի առաջ արտահայտած իր դրույթները, որոնք էլ հիմք հանդիսացան 1922 թ. մարտի 4-ին կառավարության կողմից ընդունված դեկրետին, ըստ որի՝ մի շարք բարեփոխությունների հետ (վեպագրություն, երկբարբառների փոխարեն՝ երկհնչյուններ, բառասկզբի ձայնավորից առաջ գրվող յ-ն հ-ով փոխարինել, բառավերջի ա, ո ձայնավորներից հետո անձայն յ-ն չգրել և այլն) ռեֆորմն ուներ մի շատ կարևոր թերություն՝ այբուբենից հանվում էին օ և է տառերը, որոնք վերականգնվեցին 1940 թվականի օգոստոսի 15-ի Տերմինաբանական կոմիտեի որոշմամբ:

1925-ին Արեղյանն ընտրվում և մինչև 1930 թ. աշխատում է որպես Գիտության և արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի մախագահ: 1926-ին մրան շնորհվում է պետական համալսարանի պրոֆեսորի, իսկ 1935-ին՝ Գիտության վաստակավոր գործչի կոչում. միաժամանակ մրան honoris causa շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1939-ին Մ. Արեղյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանի գործոն աշխատակցությամբ, կազմում է «Սասունցի Դավթի» համահավաք տեքստը և Էպոսի 1000-ամյա հոբելյանի առթիվ հոբելյանական մատաշրջանում մի ընդարձակ զեկուցում կար-

⁷ Տե՛ս «Նոր-Դար», 1890, № 151, 153, 154, 155 և 161-169:

* Մ. Արեղյանի այս հոդվածով սկսվեց ուղղագրության հարցերի հետ կապված մեծ բանավեճ, որին մասնակցում էին ժամանակի գրական-հասարակական բոլոր կազմակերպություններն ու հրատարակչությունները, գրեթե բոլոր գրողներն ու արվեստագետները և հատկապես դարավերջի ու 20-րդ դարի 10-ական թվականների ամբողջ մամուլը՝ «Նոր-Դար», «Մշակ», «Արոր», «Արարատ», «Մուրճ», «Արձագանք» և ուրիշներ, որոնք հեղեղված էին թեր և դեմ կողմերով: Դրանց պարագլուխներն էին Արեղյանն ու Ստ. Մախասյանը:

⁸ Հայոց լեզվի ուղղագրությունը, Թիֆլիս, 1892, առանձին գիրք՝ 146 էջ:

դում, որը թարգմանվում է ռուսերեն և էպոսի հետ միասին 1941 թ. մայիսին ուղարկվում Մոսկվա՝ այնտեղ կայացած հայ գրականության տասնօրյակին:

1943-ի ճայեմբերին հիմնվում է Հայաստանի Գիտությունների Ակադեմիան, որի ակադեմիկոսների և թղթակից անդամների շարքում նշանավոր հայագետներ Հր. Աճառյանի, Ստ. Մալխասյանի, Գր. Ղափանցյանի, Հ. Մանանդյանի հետ ընտրվում է նաև Մանուկ Աբեղյանը և ավելի եռանդուն կերպով շարունակում իր գիտական գործունեությունը՝ քրտնաջանորեն աշխատելով իր «Հայոց հին գրականության պատմություն» բազմահատոր ուսումնասիրության վրա, որի միայն առաջին երկու հատորներն է նա ավարտի հասցնում՝ ընդգրկելով մեր գրականությունը՝ սկզբնավորումից մինչև 19-րդ դարի կեսերը:

79-ը բոլորած վաստակաշատ գիտնականի ու մանկավարժի վատառողջ վիճակն ավելի է վատթարանում ռազմաճակատում որդու անհայտ կորած լինելու լուրը ստանալուց հետո, և 1944 թ. սեպտեմբերի 25-ին նա կնքում է իր մահկանացուն: Այդ առիթով Դ. Դեմիրճյանը գրում է. «Նա ընկավ հսկա կաղնու մեծ, և ծանր լուրջությամբ տիրեց անտառում»: Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին Լենինգրադից հեռագրում է. «Խորին կակիծով ընկալեցինք հայ գիտության և հայ ժողովրդի կրած ահեղի կորստի՝ մեծապատիվ Մանուկ Աբեղյանի մահվան գույժը»: Նրա մահվան տարեկիցի առթիվ Ավ. Իսահակյանը գրում է. «Մանուկ Աբեղյան. ի՞նչ էր մեզ համար նա: Հայկական ավանդությունների մարմնացում, գիտնական՝ բառիս ամենախորին իմաստով, անվախ, անմախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր՝ լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ, սկզբունքների մարդ՝ մեր ապառաժների պես կայուն. մտքի և կամքի, աշխատանքի և գործի հսկա, պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ»⁹: Ահա Աբեղյան մարդու և գիտնականի համապարփակ բնորոշումը:

Ծիշտ է նկատված, որ լայնախոհ, մեծ մտահորիզոն, անխաբ ինքնազգացողություն ունեցող մարդիկ կամխագուշակում են նաև իրենց մահվան օրը. այդպիսին էր Հր. Աճառյանը¹⁰, այդպիսին էր նաև Մ. Աբեղյանը: Թատերագետ Ռուբեն Զարյանն իր հուշերում գրում է, որ 1944 թ. աշնանը Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում կազմակերպվելու էր հայկական կերպարվեստի ցուցահանդես, որին պետք է մասնակցեին նաև Մանուկ Աբեղյանի որդին՝ Մհեր Աբեղյանը, բայց հոր վատառողջության պատճառով նա չէր ուզում մեկնել. հայրը հորդորում է, որ նա գնա.

-Գնա՛, մի՛ վախենա, չեմ մեռնի: Գնա՛, բայց աշխատի՛ր սեպտեմբերի 24-ին այստեղ լինես:

Մհերը մեկնում է Մոսկվա: Անցնում են օրեր: Աբեղյանը հարսին պատվիրում է Մհերին նստակ գրել և իր կողմից խնդրել, որ սեպտեմբերի 24-ին Երևանում լինի: Անցնում է մի քանի օր, հարսին հարցնում է.

⁹ Տե՛ս Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 138:

¹⁰ Տե՛ս «Լեջմածին», 1996, հոկտեմբեր-նոյեմբեր (Ժ-ԺԱ), էջ 120:

-Լուսի՛կ, մամակ գրեցի՞ր:

-Գրեցի հայրի՛կ, ու պատվիրեցի....

Նամակը հասնում է Մհերին, բայց մա այդ օրը հայ պատվիրակների հետ Մեծ թատրոնում էր. «Ներկայացման կեսին, երբ կատարվում էր մի ողբերգական արիա, հանկարծ մի չարագուշակ զգացում ընկավ սիրտս, կողքիս մտած Ռուբեն Դրամբ-յանին ասացի՝ հայրիկին բան պատահեց», - պատմում է Մհերը: Առավոտյան մա ստանում է հոր մահվան բոթաբեր հեռագիրը¹¹:

Մահուկ Արեղյանը, իր գործընկերների, ուսանողների ու ժամանակակիցների գնահատմամբ, եղել է խիստ աշխատասեր, խստապահանջ դասախոս, խոհուն ու բեղուն գիտնական: Նրա ճեմարանական աշխատանքային ընկեր Հր. Աճառյանն իր հուշերում բնութագրելով գործընկերոջը՝ գրում է, որ մա ճեմարանում հայագետի մեծ համաբավ էր վայելում, բոլորը՝ մեծից փոքր, խոնարհվում էին մրա առաջ և մրան համարում անգերազանցելի հայագետ¹²:

Հր. Աճառյանի կարծիքն են հաստատում մաև Մ. Արեղյանի համալսարանական ուսանողները: Ռուբեն Զարյանը գրում է, որ Արեղյանի համբավն ինքը լսել էր դեռևս Ախալքալաքում ուսուցիչ աշխատելիս, ինչպես մաև Թիֆլիսում: Եվ ահա Երևանի համալսարանում մա բախտ է ունենում լսելու մեծ հայագետին, իսկ Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչ եղած ժամանակ ավելի մոտիկից է ճանաչել «հայագիտության կաղնուն» (իր խոսքերն են): «Ուներ բամբ ձայն և միշտ մոայլ էր, անժպիտ... Մի ուժ կար Արեղյանի մեջ, որ ստիպում էր ինձ, և ոչ միայն ինձ, մուլհիսկ տարեց ու մեծահոշակ մարդկանց ինչ-որ տարածության վրա մնալ: Բոլորս ակնածում էինք, պատկառում: Երբ մա սենյակ էր մտնում, քո կամքից անկախ, ոտքի էիր կանգնում»: Ծատ բնութագրող են մաև Ռ. Զարյանի հետևյալ տողերը. «Ուսուցիչներ կան, թեկուզ և մշամավոր իրենց ասպարեզներում, որոնց աշակերտները գալիս և անցնում են մրանց: Ես համարյա թե չգիտեմ չգերազանցված ուսուցիչ: Իմ ճանաչածներից միակը Մ. Արեղյանն էր, որին իր աշակերտներից ոչ մեկը գերազանցել չկարողացավ: Արեղյանն ուսուցիչ էր և այդպես էլ մնաց»¹³:

Գառնիկ Ստեփանյանը գրում է, որ Արեղյանի մասին լսել էր Հունաստանի որբանոցում, երբ 14 տարեկան էր, իսկ մրա գործերին ծանոթացել է Երևանի տպարանում գրաշար եղած ժամանակ և զարմացել այդ վիթխարի գիտնականի մտքի թռիչքի ու գիտելիքների պաշարի վրա, իսկ երբ ծանոթացել է մրա հետ, Մ. Արեղյանն իր վրա թողել է խստաբարո մարդու տպավորություն. «Հարցերիս պատասխանում էր կարճ, լակոնիկ մախադասություններով: Ուրիշների հետ էլ խոսում էր մույն պաշտոնական ոճով: Բնավորությունն էր... Աճառյանի տանն ինձ զգում էի

¹¹ Ռ. Զարյան, Հուշապատում, գիրք 1-ին, 1975, էջ 297:

¹² Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, 1967, էջ 206:

¹³ Ռ. Զարյան, մշվ. աշխ., էջ 298:

հարազատ, անգամ համարձակվում էի նրա հետ զրույցի բռնվել: Միճդե՛տ Արեղյանի հետ իմ հարաբերությունը պաշտոնական էր»¹⁴:

Ահա և Մ. Արեղյանի համալսարանական ուսանողներից Հակոբ Մխիթարյանի պատմածը. «Ջանգը հնչեց. լսարանը լուռ սպասում էր Մանուկ Արեղյանին: Եկավ նա՝ ծանրաքայլ ու ծանրամարմին, հաստիկ ու թիկնեղ, ուռուցիկ ապակիներով ակնոցները աչքերին: Ջայնը խոպոտ էր, դեմքը՝ կոպիտ ու խոժոռ: Առաջին հայացքից, մանավանդ անծանոթ մարդու համար, տհաճ տպավորություն էր թողնում: Էջմիածնեցիները ծափահարեցին, նրանց հետևեցինք բոլորս... Բայց երբ սկսեց դասախոսությունը, շարունակում է Մխիթարյանը, - Արեղյանը բոլորովին փոխվեց բոլորիս աչքերում՝ ձայնը մեղմացավ, խոժոռ դեմքը պայծառացավ, գեղեցկացավ, և նա դարձավ ուսանողների ամենասիրելի ու ամենահարգալից դասախոսը»¹⁵: Մխիթարյանը հիացմունքով ավելացնում է, որ Արեղյանի մասին պատմվող առասպելները համապատասխանում են իրականությանը, որ նա իսկապես ժամանակի դյուցազն էր՝ «Այդուծածն Մհեր», որովհետև, բացի իր դասավանդած առարկաները գերազանց տիրապետելուց, շատ լավ գիտեր նաև իր ժողովրդի պատմությունն ու աշխարհագրությունը և իր անսպառ ու անծայրածիր գիտելիքները ներդնում էր չափազանց հետաքրքիր դասախոսությունների մեջ: «Հայ հին գրականության որևէ հարց կամ հայ ժողովրդական էպոսի որևէ դրվագ մեկնաբանելիս նա մեր աչքերի առջև բաց էր անում և՛ աշխարհագրական տարածքը, և՛ ժողովրդի պատմությունը...»¹⁶:

Մ. Արեղյանը համալսարանում դասավանդում էր մի քանի առարկաներ՝ ժողովրդական բանահյուսություն, հայ գրականություն, հայոց լեզվի տեսություն, տաղաչափություն՝ բոլորն էլ նույն խորությամբ ու համապարփակությամբ:

Այդքան գիտելիքներ Մ. Արեղյանը ձեռք էր բերել իր համառ աշխատասիրության շնորհիվ, որոնց հիմքերը դրվել էին դեռևս Գևորգյան Շեմարանում սովորելու տարիներին: Իր 25-ամյակը բոլորած Շեմարանը համազգային հռչակ ու հեղինակություն էր վայելում, որովհետև այստեղ էին դասավանդում Գերմանիայում, Ֆրանսիայում, Պետերբուրգում և ուրիշ առաջավոր երկրներում բարձրագույն կրթություն ստացած այնպիսի մանկավարժ գիտնականներ, ինչպիսիք էին պատմաբաններ Հակոբ Մանանդյանը, Աշոտ Հովհաննիսյանը, լեզվաբաններ Հրաչյա Աճառյանը, Գրիգոր Ղափանցյանը, Ստեփանոս Պալասանյանը, հրապարակախոս և գրականագետ Միհաս Բերբերյանը, բանասերներ Ստեփան Կանալյանը, Ստ. Մալխասյանցը, Մանուկ Արեղյանը, Գարեգին Հովսեփյանը, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը, արվեստաբան Գարեգին Լևոնյանը, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, մանկավարժներ Սեդրակ Մանդինյանը, Ստեփան Լիսիցյանը, հոգեբան-մանկավարժ Գուրգեն Էդիլյանը, երաժիշտներ Կոմիտաս վարդապետը,

¹⁴ Գ. Ստեփանյան, Հողվածներ և հուշեր, 1985, էջ 259:

¹⁵ Հ. Մխիթարյան, Հայոց մեծերի հետ, 1990, էջ 185-199:

¹⁶ Նույն տեղում, էջ 188:

Կարա-Մուրզան, Ակարիչներ Վարդգես Սուրենյանցը, Եղիշե Թադևոսյանը և շատ ուրիշներ: Ինչպես վկայում են ամուսնները, Ժեմարանում դասավանդած այս մանկավարժներից բոլորն էլ հայագիտությանը հայտնի են իրենց բազմաթիվ աշխատություններով, ըստ որում՝ նրանք գրեթե բոլորն էլ իրենց գիտական առաջին քայլերը կատարել են հենց այստեղ՝ Մայր Աթոռի տպարանում տպագրելով իրենց մեծագործությունները, իսկ «Արարատ» հանդեսում՝ հոդվածները: Գիտական աշխատանքներ կատարելու նրանց գործին մեծապես նպաստում էր Էջմիածնի հուշակավոր ձեռագրատուն-մատենադարանը: Հենց այս տարիներին ու այստեղ էլ Մ. Արեղյանի հրատարակած առաջին գործը մվիրված էր Ամենայն Հայոց մեծագործ Կաթողիկոս Գևորգ Դ-ի համառոտ կենսագրությանը, որը լույս տեսավ մույն Կաթողիկոսի հիմնադրած Ժեմարանի 25-ամյակի առթիվ¹⁷: Այնուհետև իրար հետևից լույս տեսան նրա բազմաթիվ աշխատությունները՝ «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (1899), «Հազար ու մի խաղ», «Ժողովրդական երգարանը՝ Կոմիտասի խմբագրությամբ», (1904-1905), «Աշխարհաբարի քերականություն» դասագիրքը (1906), «Գրաբարի համառոտ քերականությունը» (1907), «Աշխարհաբարի հոլովները» (1908), «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (1909), «Աշխարհաբարի շարահյուսություն» (1912), «Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականության պատմությունից» (1909), «Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում» (1912), «Մեր ուղղագրության մասին», (1913), և այսպես շարունակ: Նա մինչև կյանքի վերջը անխոնջ ու անդադրում աշխատում էր և իրար հետևից հրատարակում հայ բանասիրության մեջ մնայուն ու կոթողային աշխատություններ, որոնք ամփոփված են Գիտությունների Ակադեմիայի՝ իր անունը կրող գրականության ինստիտուտի կողմից հրատարակված ութ ընդարձակածավալ ու մեծադիր հատորներում:

Մ. Արեղյանը առաջին հայ լեզվաբանն էր, որ ստեղծեց հայոց լեզվի գիտական քերականություն՝ իր բոլոր բաժիններով, և իրավամբ համարվում է արևելահայ գրական լեզվի գիտական քերականության հիմնադիրը¹⁸:

Մ. Արեղյանը առաջինն էր, որ հիմք դրեց հայոց լեզվի գիտական ու համակարգված հնչյունաբանությանը՝ բացահայտելով արևելահայերենի հնչյունական կառուցվածքի առանձնահատկությունները, օրենքներն ու օրինաչափությունները, հնչյունների ֆիզիկական ու ֆիզիոլոգիական հատկանիշները՝ տալով դրանց գիտական դասակարգումը, ինչպես նաև դիրքային (շեշտից կախված), փոխադեցական և պատմական (շեշտից անկախ) բոլոր նկատելի դեպքերը և այդ բոլորը՝ գիտական բարձր մակարդակով:

¹⁷ Գևորգ Դ. Մեծագործ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Վաղարշապատ, 1899, էջ 91:

¹⁸ Տե՛ս Էդուարդ Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հատ 1, Ե., 1958:

Մ. Աբեղյանը նորարար է. նա իր խորաթափանց ուսումնասիրություններով մեր լեզվաբանության մեջ հիմք դրեց բառագիտությանը՝ որպես լեզվի գիտական ուսումնասիրության կարևորագույն ճյուղերից մեկը:

Լեզվի ձևաբանական համակարգում Մ. Աբեղյանի գիտական նորություններն ավելի խորն են ու բազմաբնույթ. սկսած խոսքի մասերի դասակարգման նրա սկզբունքից և իր ընդունած ու համակարգած խոսքի մասերի ու նրանց յուրաքանչյուր քերականական կարգի մասին գիտական դատողություններ անելուց, խիստ նկատելի է Աբեղյանի կոտ տրամաբանությունը. այստեղ ևս նրա տեսադաշտից գրեթե ոչինչ է վրիպել, և, ամենակարևորը՝ նրա այդ ինքնատիպ համակարգում տրամաբանական գրեթե ոչ մի հակասություն կամ շեղում հնարավոր չէ ցույց տալ¹⁹:

Հայտնի է, որ Աբեղյանը լեզվի մեջ եղած նյութական իմաստ ունեցող բառերը բաժանում էր չորս խոսքի մասերի՝ բայ, գոյական, ածական, մակբայ, իսկ թվականները, դերանուններն ու դերբայները բաժանում էր մշված խոսքի մասերի միջև: Զևաբանական համակարգում, հետևելով իր որդեգրած երիտքերականների ուղղությանը, նա ընդունում էր հինգ հոլով՝ նույնացնելով ուղղականն ու հայցականը, սեռականն ու տրականը, այսինքն՝ առաջնությունը տալիս է բառաձևերին: Հայտնի է, որ այս հարցում, ինչպես ուղղագրության հարցերում, Աբեղյանը հայտնի բանավիճող էր, և հայտնի էր նրա ու Սո. Մալխասյանի բանավեճը նաև այս հարցում²⁰:

Աշխարհաբարի ձևաբանական մակարդակում Մ. Աբեղյանն ավելի շատ ճշգրտումներ, ուղղումներ ու ներդրում ունի հատկապես բայ խոսքի մասի հետ կապված: Հայտնի է նրա բայականություն համակարգը. բայ ասելով Աբեղյանը խոսք էր հասկանում, այդ պատճառով էլ նա դերբայները բայ չէր համարում, այլ դերանունների մեջ դրանք բաշխում էր մյուս խոսքի մասերի վրա:

Մ. Աբեղյանի քերականական համակարգում շատ կարևոր տեղ ունի նաև աշխարհաբարի շարահյուսական համակարգը, որտեղ բազմաթիվ հարցեր նա նորովի է քննել ու մեկնաբանել: 1912-ին Վաղարշապատում լույս տեսած նրա «Աշխարհաբարի շարահյուսությունը» եզակի երևույթ էր ժամանակի գիտական կյանքում: «Նա առաջին էր, որ շարահյուսական ուսումնասիրությունները բարձրացրեց մի նոր մակարդակի և դարձրեց քերականական ուսումնասիրության՝ ձևաբանության հետ իրավահավասար մի նոր ճյուղ»²¹:

Այս աշխատանքում նա քննում է բառերի և խոսքերի շարահյուսական խնդիրները. առաջինի հետ կապված նա ուսումնասիրում է պարզ նախադասության կառուցվածքը, բառերի պաշտոնները, կապակցության եղանակներն ու միջոցները, երկրորդում նրա մեկնակետը նախադասությունն է, նրա տեսակները, կառուցվածքը և շարահյուսական բազմազան հարաբերությունները: Նախադասությունը հա-

¹⁹ Տե՛ս Շ. Ստեփանյան, Մ. Աբեղյանի քերականագիտական հայացքները, Ե., 1989:

²⁰ Տե՛ս «Էջմիածին», 1998, մայիս, էջ 136-137:

²¹ Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, 1962, էջ 150:

մարելով հոգեբանական դատողություն՝ մրա կենտրոնում դիտում է բայի դիմապոր ձևը, մյուս բառերը՝ դրա լրացումներ, դրանց թվում՝ մաս ենթական. «Բայի նկատմամբ ստորադաս են իր լրացումները՝ ենթակա, ստորոգրյալ ու ստորոգելիական վերադիր, խնդիր և պարագա»²²։ Եվ ահա Աբեղյանի եզրակացությունը՝ «Խոսքն, ուրեմն, մտածողության արտահայտությունն է բայով, իսկ բայ ասվում են այն բառերը, որոնք մենակ խոսք են կազմում»²³։

Աբեղյանը հայ քերականագիտության մեջ առաջինն էր, որ նախադասության ձևավորման առաջին միջոցը համարեց ստորոգումը, որն իրականացվում է խոնարհված բայով. իսկ ի՞նչ է ստորոգումը. «Ստորոգում, այսինքն՝ հատկանիշի վերագրվելն է առարկային»²⁴։

Բարդ նախադասությունների համակարգում Աբեղյանը նույնպես նորարար է. ճիշտ է, այդ հարցերով առաջինը զբաղվել է Ստ. Պալասանյանը, բայց Աբեղյանն է ճշգրտել ու սահմանազատել երկրորդական նախադասությունների մի քանի տեսակները (ենթակա, ստորոգելի, բացահայտիչ, պարագայականների մի քանի տեսակներ)։ Վերջապես, հայ շարահյուսագիտության մեջ առաջինը Աբեղյանն է դիտարկել բազմաբարդ նախադասություններն ու նրանց երեք ենթատեսակները։ Բազմաբարդ նախադասությունների մի տեսակն էլ Աբեղյանը համարում էր պարբերությո՞ւթը, որը նույնպես մրա նորամուծությունն է։

Ակադեմիկոս Էդուարդ Աղայանի բնորոշմամբ՝ «Մանուկ Աբեղյանը մեր գրական լեզվի ամենախոշոր ուսումնասիրողն է և ամենամեծ վաստակն ունի այդ բնագավառում։ Եվ ինչպես որ չի կարելի հայոց լեզվի պատմության կամ հայ բարբառագիտության հարցերով զբաղվել՝ առանց Հրաչյա Աճառյանի մեծահարուստ գիտական ժառանգության, այնպես էլ անկարելի է զբաղվել ժամանակակից հայերենի ուսումնասիրությամբ՝ առանց խորապես յուրացնելու Մ. Աբեղյանի լեզվաբանական ժառանգությունը, որ մեր գրական լեզվի գիտական ուսումնասիրության հաստատուն հիմքն է կազմում»²⁵։

Մ. Աբեղյանը մեծ ավանդ ունի մաս հայ բառարանագրության մեջ. խորապես ուսումնասիրած լինելով ժամանակակից հայերենի բառազանձը՝ Աբեղյանն իր բացառիկ հմտությունն ու հարուստ գիտելիքները ի սպաս է դրել մեր լեզվի գիտական ու տեխնիկական բառարանագրության մշակման գործին՝ անձամբ կազմելով կամ հեղինակակից ու խմբագիր լինելով մի քանի մասնագիտական բառարանների ու տերմինաբանների ստեղծման գործին։ Բառարանագրական մրա բուն գործունեությունն սկսվում է 1919-ին, երբ Ստ. Մալխասյանցի հետ կազմում և խմբագրում է «Ռուս-հայերեն իրավագիտական առձեռն բառարանը», 1927-ին ան-

²² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, «Միտք» հրատ., 1965, էջ 395։

²³ Նույն տեղում, էջ 362։

²⁴ Նույն տեղում, էջ 360։

²⁵ Էդ. Աղայան, Ողջ. աշխ., հատոր 2-րդ, էջ 152։

ձամբ կազմել է «Ռուս-հայերեն ռազմական տերմինների թարգմանական բառարանը»: Նա միաժամանակ Հրաչյա Աճառյանի և Գրիգոր Ղափանցյանի հետ մասնակցել է երկաթուղային տերմինների հայ-ռուսերեն բառարանի ստեղծման աշխատանքներին, 1930-ին երկու բժիշկների հետ կազմել է «Լատին-ռուս-հայերեն» եռալեզվյան բժշկական բառարանը: Գարեգին Լևոնյանի և Դերենիկ Դեմիրճյանի անմիջական մասնակցությամբ կազմել է նաև գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինաբանական բառարանը²⁶:

Այսպիսով, մեր դարի 20-30-ական թվականներին Արեղյանը հայերենացրեց, թարգմանեց ու կազմեց հազարավոր հասարակական-քաղաքական, գիտական ու տեխնիկական բառեր ու տերմիններ՝ ավելի հարստացնելով ու կատարելագործելով մեր բազմադարյան բառազանգը:

Հայագիտության մեջ Մ. Արեղյանը հայտնի է նաև որպես խորիմաց ու հմուտ բնագրագետ: Իր գիտական ուսումնասիրություններին զուգահեռ Արեղյանն այդպիսով ենթարկել է հատուկ քննության և համակարգման: Նա բանասիրական հատուկ հետազոտության է ենթարկել Էջմիածնի մատենադարանում գտնվող Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 17 ձեռագրերը և կազմել դրանց համեմատական բնագիրը, որին հաջորդել է Կորյունի 9 ձեռագիր մատյանների քննական-բաղդատական բնագրի կազմումը: Այնուհետև Գևորգյան Շեմարանի իր աշակերտների և Կոմիտաս վարդապետի գործակցությամբ նա հավաքել, գրի է առել և տեքստաբանական ուսումնասիրության ենթարկել հազարավոր գեղջկական երգեր, հայրեններ ու անտուհներ, որոնք հետագայում ամփոփվեցին «Ժողովրդական խաղիկներ» ժողովածուում, որտեղ իրենց տարբերակներով տեղ են գտել 3400 հայ հին ու նոր, քաղաքային ու գեղջկական երգեր ու խաղեր, որոնք Արեղյանի ու Կոմիտասի շնորհիվ փրկվեցին անդառնալի կորստից: Եվ, վերջապես, Արեղյանը հսկայական բնագրագիտական աշխատանք է կատարել (Կարապետ Մելիք-Ռամազանյանի հետ) «Սասնա ծռերի» 65 տպագիր ու անտիպ պատումների զուգադրման, խմբագրման ու համահավաք բնագիր կազմելու մեծ ու շնորհակալ գործում²⁷:

Մ. Արեղյանն ինչքան որ խոհուն ու կոտ տրամաբանությամբ լեզվաբան, բառարանագիր ու տեքստաբան էր, այնքան էլ ընդգրկում է նրա ավանդը հայ ժողովրդական բանահյուսության և հայ հին ու միջնադարյան գրականության ուսումնասիրման բնագավառում, որոնց տքնաջան մշակն է եղել իր ամբողջ կյանքի ընթացքում: Արեղյանի անունն ամենից առաջ անխաղճիորեն կապված է հայ ժողովրդական բանահյուսության գլուխգործոց ազգային մեծ էպոսի հետ: Նա եղել և մնում է

²⁶ Մ. Արեղյանի բառարանագրական գործունեության մասին հանգամանորեն տե՛ս Շ. Ստեփանյան, Մ. Արեղյանի քերականագիտական հայացքները, Ե., 1989, էջ 30-37, և Ս. Հարությունյան, Մանուկ Արեղյան (կյանքն ու գործը), Ե., 1970, էջ 621-636:

²⁷ Արեղյանի տեքստաբանական ծառանգության մասին մանրամասնորեն տե՛ս Ս. Հարությունյան, մշվ. աշխ., էջ 601-621:


մեր էպոսի ամենահմուտ ուսումնասիրողը՝ սկսած մրա առաջին պատումից (լսած Շեմարանի պահակ Նախո քեռուց, 1886-ին) մինչև մրա համահավաք բնագիրը կազմելն ու խմբագրելը (1939): «Վեպն ամբողջապես ռամկական, գեղջկական բնավորություն ունի, հայ հասարակ ժողովրդի կյանքն ու հոգին ենք տեսնում այն-տեղ, մրա միտ ու կացը, պատմությունը, բարքերը և այլն», - գրում է Արեղյանը²⁸:

Մ. Արեղյանի բանասիրական մյուս մեծարժեք գործերից են «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (1899, Վաղարշապատ), «Հայ գուսանական ժողովրդական երգեր» (1927, 1930, 1940, Երևան) խորագրով ծավալուն ուսումնասիրությունները, Կոմիտասի հետ կազմած «Հազար ու մի խաղ» ժողովածուն (1905, Վաղարշապատ) և բազմաթիվ ուրիշ բանասիրական ուսումնասիրություններ:

Հայ ժողովրդական բանահյուսության և հայոց լեզվի բազմակողմանի ուսումնասիրության հետ միասին, Արեղյանը տարիներ շարունակ զբաղվել է ման հայ գրականության խորքային քննությամբ՝ գրելով բազմաթիվ հոդվածներ ու կոթողային աշխատություններ: Դեռևս 1916 թ. «Ազգագրական հանդես»-ում մա հրատարակեց «Գրիգոր Նարեկացի» հետազոտությունը, դրան հաջորդեց «Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունները մրանց մեջ» գիրքը (Երևան, 1935): Հայ հին և միջնադարյան գրականության ասպարեզում մրա կոթողային աշխատությունը և միևնույն ժամանակ կարապի երգը եղավ «Հայոց հին գրականության պատմություն» ստվարածավալ երկհատորանոց աշխատությունը (Երևան, 1944 և 1946), որը մրա երկարամյա բեղմնավոր աշխատանքի արդյունքն է:

Մ. Արեղյանը եղավ այն հմուտ գիտնական-տեսաբանը, որն ստեղծեց հայ տաղաչափության գիտական համակարգն ու տեսությունը: Նա այս հարցերով ևս զբաղվել է երկար տարիներ և իր բազմամյա աշխատանքի արդյունքը համարագումարի բերել 1933-ին հրատարակած «Հայոց լեզվի տաղաչափություն» մախորդը չունեցող աշխատանքում, որտեղ բազմակողմանիորեն ուսումնասիրված են հայոց լեզվի ոչ միայն բառային ու խոսքային շերտերը, այլև հայկական ոտանավորների չափերն ու հանգերը՝ 7-րդ դարից մինչև իր օրերը կրած փոփոխություններով:

Այսպիսին է մեծավաստակ գիտնականի՝ Գևորգյան Շեմարանի մեծ երախտավորի գիտական և գիտամանկավարժական գործունեությունն ու ժառանգությունը:



²⁸ Մ. Արեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 22: